



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Խ ԿԵՂԵՅԻ



ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ ՄՈՒՐՐ ԱՍՏԻԱԾԱԾԻՐ

16 ՕԳՈՍՏՈՍ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ էջ 1
Ծանուցում էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ (7.10-16)

Դարձեալ, Տէրը այս պատգամը ղրկեց Աքազի, ըսելով. «Տէր Աստուծմէդ քեզի համար նշան մը խնդրէ, երկրի խորերէն կամ երկինքի բարձունքէն»: Աքազ պատասխանեց. «Ո՛չ, զԱստուծ չեմ փորձեր»:

Այն ատեն Եսայի ըսաւ.
«Լսեցէ՛ք ուրեմն, ո՛վ Դաւիթի տուն. չի՞ բաւեր որքան մարդոց համբերութիւնը հատցուցիք, որ կը փորձէք Աստուծոյ համբերութիւնը եւս հատցնել: Ծիշդ այդ պատճառով Տէրը ի՛նք հետեւեալ նշանը պիտի տայ ձեզի.– Կոյսը պիտի յղանայ եւ զաւակ մը ծնի, որ «Էմմանուէլ» պիտի կոչէ: Անիկա կարագով ու մեղրով պիտի սնանի, եւ նախքան չարը ճանչնալը եւ կամենալը՝ բարին պիտի ընտրէ. եւ տակաւին անիկա բարին ընտրել ու չարը մերժել չսորված՝ երկու երկիրներն ալ, որոնցմէ դուն կը վախնաս, իրենց թագաւորները պիտի կորսնցնեն եւ քու երկիրդ պիտի փրկուի»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒԳ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (3.29-4.7)

Ապա, ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանիք՝ կը նշանակէ թէ Աբրահամի

զաւակներ էք եւ պիտի ժառանգէք ինչ որ Աստուծ անոր խոստացաւ:

Բայց գիտցէք նաեւ, թէ ժառանգորդ մը թէպէտ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ անիկա անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի խնամակալներու եւ հոգաբարձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակակէտը: Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուծ աշխարհ ղրկեց իր Որդին, որ մարդկային մօրմէ մը ծնաւ եւ Մովսիսական Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուծ մեր սիրտերուն մէջ ղրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուծ «Հայր» կը կոչենք: Ուստի, այլեւս ծառայ չէք, այլ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (2.1-7)

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն

մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրբոյ կառավարիչ Կիւրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ Դաւիթի սերունդէն ըլլալուն համար, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար զնաց Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը՝ Դաւիթ

... ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

թագաւորի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթլեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:



ՀՈՎԻԷԸ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄՆ ՄԷՁ

Անոնք որ կը փափաքին հովիւին այցելութիւնը ունենալ իրենց տունէն ներս, թող բարեհաճին դիմել Տ. Գառնիկ Քհնյ. Գոյունեանի, հեռաձայնելով 514 331 5445 x203 կամ՝ 514 909 5203 թիւերէն մէկուն:

ԵՐԵՄՆՕՐԵԱԿ

Երոտւաբար, 17 Օգոստոս 2009

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ

Հրագւաբար, 20 Օգոստոս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 23 Օգոստոս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագւաբար, 27 Օգոստոս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 30 Օգոստոս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագւաբար, 03 Սեպտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 06 Սեպտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագւաբար, 10 Սեպտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 13 Սեպտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագւաբար, 17 Սեպտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 20 Սեպտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ